— Դու այդ նամակը գողացել ես, պէտք է տանես դարձեալ իր տեղը դնես, — խօսքը փոխեց Ասլանը:

— Կարծեմ աստուած իմ այդ գողութիւնը մեղք չի համարի, — ասաց տիկինը ժպտալով:

— Ես էլ կարծում եմ, որ մեղք չի համարի, բայց քո ամուսինը կասկածանքի մէջ կընկնի, երբ կտեսնէ, որ նամակը իր տեղումը չէ: Դու այն ասա՛, յիշո՞ւմ ես, թէ ուրիշ ի՞նչ խօսեց փաշայի քարտուղարը, երբ նամակը յանձնեց քո ամուսնուն:

— Բոլորը յիշում եմ:

— Ու՞մ վրայ կասկած ունէին:

— Քո վրայ: Իմ ամուսինը ասաց քարտուղարին. «Այդ եւրոպացի բժիշկը իմ աչքում մի բարի պտուղ չի երեւում»... Իսկ քարտուղարը պատասխանեց, թէ բժիշկը հայոց առաջնորդի մօտ հիւր է կանչուած, փաշան նոյնպէս հրաւիրուած է, այնտեղ պէտք է փորձել նրան: — Իրաւ՞ դու հրաւիրուած ես առաջնորդի մօտ:

— Այո՛:

— Ես խորհուրդ կը տայի չգնալ, փորձանքի մէջ կընկնես:

— Հէնց դրա համար, որ նրանք պէտք է ինձ «փորձեն», հարկաւոր է գնալ:

— Իմ ամուսինը նոյնպէս այնտեղ կը լինի: Նա շատ վտանգաւոր մարդ է:

— «Աղոեսը հաւանոցի մէջ առիւծ կդառնայ»: — Նա վտանգաւոր է, այո՛, բայց այստեղի ողորմելի հայերի համար:

— Այնոամենայնիւ, զգուշանալ պէտք է:

— Դու առաջ միշտ քաջալերում էիր ինձ, տիկին, իսկ այժմ վհատեցնում ես: «Ծովը մտնողը թրջուելուց չի վախենայ»: Ես այդ տեսակ փորձանքներ շատ եմ տեսել: Խրախուսեցէք, ոգի եւ շունչ տուեցէք մեզ, տիկին: Մարդկային հասարակութեան մէջ բարի գործերը աւելի յաջողութեամբ կը կատարուեն, երբ գործիչների թւում կը մասնակցեն եւ կանայք: Մեսիան առաջինն եղաւ, որ հասկացաւ այդ կարեւորութիւնը, եւ նրա մարիամները եւ մարթաները, քրիստոնէութեան սկզբում, աւելի գործ կատարեցին, քան թէ պողոսները: Հինգերորդ դարու հայ կանայք վառեցին այն կրակը, որ բորբոքեց Աւարայրի դաշտի հերոսների սրտերը: Եւ այժմեան հայի կեանքում գործերը այն ժամանակ միայն շատ լաւ առաջ կը գնան, երբ կինը եւ տղամարդը կը բա-